ՀԱՐՑԱՇԱՐ
«ԳՆՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔ

Հարց 1.
Գնման առարկայի բնութագիրը՝

Գնման առարկայի հատկանիշներն են, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները:
(հոդ. 2, մաս 1, կետ 17)

Հարց 2.
Գնումների բազային միավորը՝

Մեկ միլիոն Հայաստանի Հանրապետության դրամ է:

(հոդ. 2, 1-ին մաս, 21-րդ կետ)

Հարց 3.
Էլեկտրոնային ձևով գնումների կատարման կարգը հաստատում է՝

Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

(հոդ. 5, մաս 1, կետ 2)

Հարց 4.
Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում՝

Որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:
(հոդ. 6, մաս 1, կետ 6 «բ»)

Հարց 5.
Պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվող գնումների պլանը հաստատվում է՝

Բյուջետային ծախսերի գերատեսչական և գործառնական դասակարգմամբ:
(հոդ. 15, մաս 1)

Հարց 6.
Գնումների գործընթացի կարգավորումը և համակարգումն իրականացնում է՝

Լիազորված մարմինը:

(հոդ. 16, մաս 1)

Հարց 7.
Գնումների գործընթացում օգտագործվող փաստաթղթերի, ներառյալ հրավերի և պայմանագրի օրինակելի ձևերը հաստատում է՝

Լիազորված մարմինը:

(հոդ. 16, մաս 2, կետ 8)

Հարց 8.
Գնում կատարելու ընթացակարգերն են՝

Էլեկտրոնային աճուրդ, մրցույթ, գնանշման հարցում, մեկ անձից գնում:

(հոդ. 18, մաս 1)

Հարց 9.
Պայմանագրի ապահովման չափը՝

Կազմում է պայմանագրի գնի 10 տոկոսը:

(հոդ. 35, մաս 2)

Հարց 10.
Պայմանագիր կնքվում է գնահատող հանձնաժողովի որոշման հիման վրա՝

Պատվիրատուի կողմից:

(հոդ. 36, մաս 1)

Հարց 11.
Գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելուց հետո արգելվում է՝

Բացել չբացված հայտերը, որոնք վերադարձվում են մասնակիցներին:

(հոդ. 37, մաս 2)